

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ  
ՈՐՈՇՈՒՄ N 6/3**

31 մարտի 2016 թվականի

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՍՊԻՐԱՏՈՒՐԱՅԻ ԵՎ  
ԴՈԿՏՈՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԲԱԺՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 49-րդ կետի 4-րդ ենթակետով, Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի ասպիրատուրայի և դոկտորանտուրայի բաժնի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ԵՂԶ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Ա. Հ. ՄԻՄՈՆՅԱՆ**

Հաստատված է  
ԵՊՀ գիտական խորհրդի  
2016թ. մարտի 31-ի թիվ 6 նիստում  
ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ,  
Ա. Ն. Միմոնյան  
«31» մարտի 2016թ.

**Կ Ա Ն Ո Ն Ա Դ Բ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**  
**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԵՎ**  
**ԴՈԿՏՈՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԲԱԺՆԻ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Երևանի պետական համալսարանի (այսուհետ՝ ԵՊՀ) ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի բաժինը (այսուհետ՝ բաժին) Երևանի պետական համալսարանի կառուցվածքային ստորաբաժանում է:
2. Բաժինը վերակազմակերպվում կամ լուծարվում է ԵՊՀ-ի ռեկտորի ներկայացմամբ ԵՊՀ-ի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:
3. Բաժինը գործում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ ԵՊՀ-ի և սույն կանոնադրությունների հիման վրա:
4. Սույն կանոնադրության մեջ փոփոխություններն ու լրացումներն իրականացվում են ԵՊՀ-ի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

**II. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

5. Բաժնի գործառույթներն են.
  - 5.1. ԵՊՀ-ում ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի ընդունելության կազմակերպումը,
  - 5.2. ԵՊՀ-ի հայցորդների ձևակերպումը,
  - 5.3. ԵՊՀ-ի ասպիրանտների և հայցորդների անձնական գործերի վարումը,
  - 5.4. ԵՊՀ-ի ասպիրանտների և հայցորդների ամենամյա ատեստավորման կազմակերպումը,
  - 5.5. Ասպիրանտների և հայցորդների որակավորման քննությունների կազմակերպումը և դրանց արդյունքների ամփոփումը:
6. Բաժինն իր իրավասության սահմաններում իրավունք ունի ընդունելու որոշումներ, եթե դրանք չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ԵՊՀ-ի կանոնադրությանը, ԵՊՀ-ի ներքին իրավական ակտերին և սույն կանոնադրությանը:
7. ԵՊՀ-ի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվով բաժնին կարող են հատկացվել ֆինանսական միջոցներ, որոնք բաժինը տնօրինում է սահմանված կարգով:

### III. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

8. Բաժնի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը, ԵՊՀ-ի կանոնադրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան:

9. Բաժնի գործունեությունը իր իրավասության սահմաններում կազմակերպում և ղեկավարում է վարիչը՝ սույն կանոնադրությանը և այլ ներքին իրավական ակտերին համապատասխան: Բաժնի վարիչը պաշտոնի նշանակվում է և պաշտոնից ազատվում է ԵՊՀ-ի ռեկտորի հրամանով:

10. Բաժնի հաստիքացուցակը ԵՊՀ-ի ռեկտորի ներկայացմամբ հաստատում է ԵՊՀ-ի հոգաբարձուների խորհուրդը:

11. Բաժնի վարիչը՝

11.1. կազմակերպում և վերահսկում է բաժնի գործունեությունը, ապահովում է բաժնի հիմնական գործառույթների իրականացումը, լուծում դրանից բխող հիմնախնդիրները,

11.2. ապահովում է ԵՊՀ-ի այլ ստորաբաժանումների հետ բաժնի փոխգործակցությունը,

11.3. ստորագրում է բաժնի անունից պատրաստվող փաստաթղթերը, բաժնի լիազորությունների շրջանակներում նախապատրաստում զեկուցագրեր, տեղեկանքներ, հաշվետվություններ, առաջարկություններ և այլ փաստաթղթեր,

11.4. տալիս է հրահանգներ, որոնք պարտադիր են բաժնի աշխատողների համար,

11.5. կատարում է աշխատանքի բաժանում բաժնի աշխատողների միջև,

11.6. լուծում է սույն կանոնադրությունից և ներքին իրավական ակտերից բխող այլ հարցեր,

11.7. պատասխանատվություն է կրում բաժնի կողմից իրականացվող աշխատանքների որակի և բաժնի առջև դրված խնդիրների հնարավորինս պատշաճ և արդյունավետ լուծման համար:

12. Բաժնի աշխատողների իրավունքները և պարտականությունները սահմանվում են աշխատանքային պայմանագրով և ԵՊՀ-ի ներքին իրավական այլ ակտերով: